Գիտություն

ԱՊՐԻԼ
№4
(397)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-Ն ԱՄՓՈՓԵՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ս/թ. ապրիլի 23-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին 2024-2025 թթ. կյանքից հեռացած ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Համլետ Գևորգյանի, Յուրի Սարգսյանի, Լևոն Թավադյանի և Ալբերտ Ղուլյանի, թղթակից անդամներ Նիկոլայ Հովհաննիսյանի, Սուրեն Մխիթարյանի, Հայրապետ Գալստյանի հիշատակը:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ողջունեց ժողովի մասնակիցներին՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին, դեսպաններին, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներին, գիտնականներին, հյուրերին:

2024 թ. ԳԱԱ համակարգում աշխատում է 3595 մարդ, որոնցից 2306-ը գիտական աշխատողներ են: Գիտական աստիճան ունի 1342 աշխատակից, որոնցից 29-ը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 42-ը՝ թղթակից անդամ:

Մինչև 35 տարեկան գիտաշխատողների թվաքանակը 2024 թ.-ին նախորդող 3 տարիների համեմատ աճել է 10%-ով, իսկ 35-50 տարեկան գիտաշխատողների թվաքանակը՝ 19%-ով:

Ներկայացնելով 2024 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց. «2024թ. ակադեմիայի գիտական կազմակերպությունները շարունակել են իրականացնել հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ գիտության գրեթե բոլոր բնագավառներում ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային ֆինանսավորման հաշվին:

2024 թ. տարեկան ընդհանուր հրապարակումների թիվը 1637 է, որից SCOPUS/WOS-ում տպագրված հոդվածների քանակը 802 է, կամ ընդհանուրի մոտ 49%: 2023 թ. համեմատ 2024 թ. SCOPUS/WOS-ում տպագրված հոդվածների թվաքանակը աճել է մոտ 41%-ով»:

Գիտությունների ազգային ակադեմիան հրապարակում է գիտության և տեխնոլոգիաների բոլոր բնագավառները ներառող 21 հանդես, ևս 9 հանդես հրապարակում են ԳԱԱ ինստիտուտները: Ակադեմիայի հանդեսներից 5–ն ընդգրկված են WEB of Science/SCOPUS գիտատեղեկատվական շտեմարաններում՝ «Ֆիզիկա տեղեկագիր»-ը, «Աստղաֆիզիկա» ամսագիրը, «Մաթեմատիկա տեղեկագիր»-ը, «Նեյրոքիմիա» ամսագիրը և «Հայկական մաթեմատիկական հանդեսը» (էլեկտրոնային), տարվում են ակադեմիայի բոլոր հանդեսները միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառելու աշխատանքներ:

2024 թ. ՀՀ ԳԱԱ-ն իրականացրել է հանրապետական և միջազգային 299 դրամաշնորհային ծրագիր:

Հաշվետու տարում ակադեմիայի համակարգում անցկացվել է 96 գիտաժողով: Ակադեմիայի համակարգում պաշտպանվել է 42 ատենախոսական աշխատանք:

ՀՀ ԳԱԱ նախագահը խոսեց կիրառական հետազոտությունների կարևորության մասին: Ներկայացնելով «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի կիրառական ծրագրերը՝ ասաց, որ ներդրված փոքրածավալ արտադրությունները պահպանում են իրենց հաստատուն տեղն ու դիրքը հայաստանյան և արտերկրյա շուկաներում: Դրանք են՝ «Նարինե» պրոբիոտիկի տարատեսակները, ներառյալ «Նարինե» և «Նարարգին» կոմպլեքս-ասոցացված կենսաբանորեն ակտիվ հավելումների դեղապատիճների, «էկոբիոֆիտ+» կենսապարարտանյութի, բուսական յուղերի, հանուկների, տարբեր դեղապատրաստուկների արտադրությունները:

Աշոտ Սաղյանը նաև նշեց Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ձեռքբերումները: Ինստիտուտը չինական ընկերությունների հետ կնքել է պայմանագիր, որի շրջանակում չինական կողմի միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվել է երկրաշարժերի մոնիթորինգի 5 կայան: Չինական կողմն արդեն մոտ 1.4 մլն դոլարի ներդրում է կատարել և տրամադրված է շարունակել համագործակցությունը:

Կայանները գրանցում են երկրաշարժերը մեծ ճշգրտությամբ: «Նույնիսկ մոտ 10 հազար կիլոմետր հեռավորության վրա՝ Ճապոնիայում, տեղի ունեցած երկրաշարժը գրանցել են մեր կայանները», - ասաց Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններն արդյունավետ համագործակցում են ՀՀ պաշտպանության նախարարության և ռազմաարդյունաբերական համալիրի հետ:

Անդրադառնալով ՀՀ ԳԱԱ ֆինանսավորմանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ 2023 թ. համեմատ 2024 թ. գրանցվել է բյուջետային ֆինանսավորման ծավալների աճ մոտ 10.3%-ով, իսկ արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները նվազել են մոտ 25%-ով:

2024 թ. ԳԱԱ բաժանմունքներին կից ստեղծված 6 մասնագիտական պրոբլեմային խորհուրդներն անցկացրել են 14 նիստ՝ նվիրված տարածաշրջանում սեյսմիկ ռիսկերին, Հանրապետությունում ռադոնի համալիր հետազոտությունների ծրագրին, «ՓԻ ԷՍ ԱՅ» ընկերության մշակած սենսորային բեկումնային տեխնոլոգիային ու նրա կիրառման հնարավորություններին, «ԷԿՈԱՏՈՄ» ՍՊԸ–ի ներկայացրած «Նարիրտ գործարան» ՓԲԸ-ում կուտակված պայթյունավտանգ լաք-էթինոլի վնասազերծման ու ուտիլիզացման հնարավոր ուղիներին, Սևանա լճի հիմնախնդիրներին, Երևան քաղաքի կանաչապատման, ծառատնկման ու ծառահատումների, բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության, վիրուսային վարակների արդի խնդիրներին, գրական հայերենի կանոնարկման ու տերմինաշինության հիմնահարցերին և այլն:

Աշոտ Սաղյանը ներկայացրեց տվյալներ ԳԱԱ միջազգային համագործակցության մասին: ՀՀ ԳԱԱ-ն համագործակցության պայմանագրեր է կնքել Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի, Աթենքի ակադեմիայի, Չինաստանի «CORE» ակադեմիայի, ՌԴ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի և Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի հետ:

2024 թ. իրականացվել է 2023 թ. հիմնադրված ակադեմիայի մրցանակի մրցանակաբաշխությունը: Շնորհվել է 6 մրցանակ՝ յուրաքանչյուրը 5 միլիոն դրամի չափով: Մրցանակները ֆինանսավորել է «ՄԱՐՏԻՆ ՍԹԱՐ» ընկերությունը: «Այս տարի ևս մեկ անվանակարգով մրցանակ է ավելացել բժշկագիտության բնագավառում: Ֆինանսավորող կողմը «ԼԻՔՎՈՐ» դեղագործական ընկերությունն է: Այսօրվանից մեկնարկում է հաջորդ՝ թվով երկրորդ մրցանակաբաշխությունը, որը նախատեսվում է անցկացնել գիտության համաշխարհային օրը՝ նոյեմբերի 10-ին»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահն ակադեմիայի բաժանմունքների և որոշ տնօրենների առաջարկով անդրադարձավ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակում ԳԱԱ կարգավիճակին և գործառույթներին: «Կրթության և գիտության ինտեգրման ուղղությամբ Գիտությունների ազգային ակադեմիայի դիրքորոշումը հիմնված է գիտական գործունեության կազմակերպման ձևերի դիվերսիֆիկացման, ապակենտրոնացման վրա՝ հիմք ընդունելով միջազգային փորձը: Գիտության իրավակարգավիճակային կենտրոնացումը մեկ կառույցում ռիսկային է և կարող է ռազմավարական խնդիրներ առաջացնել: Գիտությունների ազգային ակադեմիայի դիրքորոշումը հիմնված է բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների մասնակի միավորման և ակադեմիայի համակարգում գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարության վրա՝ հաջորդիվ կիրառելով կրթության և գիտության ինտեգրման միջազգայնորեն ընդունված մեխանիզմները: Ակադեմիայի տարբերակը, որը հավանության է արժանացել ԳԱԱ արտահերթ ընդհանուր ժողովում՝ 2024թ. հունվարին, և ներկայացվել է տարբեր ատյաններում՝ հանրապետության բարձրաստիճան ղեկավարությանը, Ազգային ժողովում, տարբեր գերատեսչություններում, տարբեր լրատվական ու վերլուծական հարթակներում, այդպես էլ հանրային քննարկման չի դրվել: Եվ 2024թ. սեպտեմբերին շրջանառության մեջ է դրվել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը, որի հիմքում դրված է կառավարության դիրքորոշումը, համաձայն որի Գիտությունների ազգային ակադեմիան դիտարկվում է առանց գիտական կազմակերպությունների:

Քննարկումներ են անցկացվել լիազոր մարմնի հետ նոր օրենքի 9-րդ հոդվածի շուրջ: Հստակեցվել են Գիտությունների ազգային ակադեմիայի գործառույթներն ու կարգավիճակային դրույթները: Համաձայն նոր օրենքի տրամաբանության՝ Գիտությունների ազգային ակադեմիային են վերապահվում հանրապետության բարձրագույն փորձագիտական կառույցի լիազորությունները՝ գիտական կազմակերպությունների գիտամեթոդական ու գիտական գործունեությունը մշտադիտարկելու, գնահատելու առաքելությամբ: Մասնավորապես ակադեմիային է վերապահվում՝

● Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և պետական այլ նախագծերի փորձաքննությունը և ծրագրերի մշտադիտարկումը՝ կառավարության կողմից սահմանված կարգով (Ծրագրերի ցանկը կհստակեցվի նախարարության հետ):

● Բոլոր բազային ծրագրերի հաշվետվությունների մոնիթորինգը և գնահատումը: Ակադեմիան կազմակերպում է գիտական նստաշրջաններ, որոնց ժամանակ ներկայացվելու են բոլոր բազային ծրագրերի հաշվետվությունները և համապատասխան մասնագիտական հանձնաժողովները գնահատական են տալու դրանց: Սա միշտ եղել է մեր թույլ կողմերից մեկը: Բազային ծրագրերի հաշվետվությունները երբևէ նորմալ մոնիթորինգի չեն ենթարկվել ո՛չ ակադեմիայում, ո՛չ էլ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեում: Դա պետք է արվի, և այն ակադեմիայի գլխավոր գործառույթներից մեկը պետք է դառնա:

● Գիտությունների ազգային ակադեմիային է վերապահվում հանրապետության ընդհանուր գիտական հաշվետվության պատրաստումը և ներկայացումը կառավարություն՝ 3 տարվա կտրվածքով:

Սրանք բավականին դժվար, աշխատատար ու պատասխանատու գործառույթներ են, և հետևաբար, խնդրի շուրջ պետք է համախմբվի Հայաստանի Հանրապետության առաջատար գիտական ներուժը, բոլոր մասնագիտական ուղղություններով պետք է կազմավորվեն փորձագիտական հանձնաժողովներ, որոնք պետք է զբաղվեն ծրագրերի և հաշվետվությունների գնահատմամբ: Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն սկսված են, ստեղծվել է նախագահին կից խորհրդատվական աշխատանքային խումբ, որտեղ ներառված են առաջատար մասնագետներ հանրապետության տարբեր գիտական ու գիտակրթական կազմակերպություններից՝ ըստ մասնագիտությունների:

Գիտությունների ազգային ակադեմիային են վերապահված նաև հայագիտական հետազոտությունների խրախուսման, գիտական ամսագրերի հրապարակման, գիտական մշակույթի ու գիտության հանրայնացման, գիտաչափական ու գիտագրադարանային ծառայությունների մատուցման, միջգիտակարգային երկխոսության ապահովման գործառույթները:

Ըստ օրինագծի՝ ԳԱԱ-ն ՀՀ հիմնադրած, ինքնավարության սկզբունքով կառավարվող հիմնադրամ է լինելու, որն իր կազմում միավորելու է ակադեմիայի անդամնե-

➤2

ՀՀ ԳԱԱ-Ն ԱՄՓՈՓԵՑ 2024 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

➢1 րին՝ ակադեմիկոսներին ու թղթակից/ասոցացված անդամներին, ակադեմիայի գիտական բաժանմունքները, ակադեմիայի աշխատակազմը, ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամներին, ՀՀ պատվավոր առաջատար և գլխավոր գիտաշխատողներին: Նշեմ, որ մեր ներկայացրած տարբերակում ակադեմիայի կազմում ներառված են նաև հիմնարկներ, սակայն այս մասով լիազոր մարմնի հետ համաձայնության չենք եկել:

Գիտեք, որ ակադեմիայի անդամների ընտրության հարցը ամենացավոտներից է. շուրջ 10 տարի է (օրենքի խախտումով), ակադեմիայի անդամների ընտրություններ չեն անցկացվել, արդյունքում մոտ երկու անգամ կրճատվել է ակադեմիայի անդամների թիվը: Օրինագծով սահմանվում է ակադեմիայի անդամների առավելագույն թիվ՝ 100, դա ամրագրված կլինի օրենքով և հետագայում ակադեմիայի ղեկավարությունը պարբերաբար կկազմակերպի ընտրություններ ազատված քվոտաների հաշվին առանց կառավարության թույլտվության: Ակադեմիայի անդամների ընտրությունները կիրականացվեն գիտաչափական տվյալների հիման վրա՝ հաստատված ակադեմիայի, բարձրագույն կրթության և գիտության լիազոր մարմնի կողմից: Արդյունքում միայն այն անձինք իրավունք կստանան մասնակցելու ակադեմիայի ընտրություններին, ովքեր կբավարարեն այդ ցուցանիշներին, կհաղթահարեն «այդ կարմիր գիծը»: Նախատեսվում է օրինագիծն ընդունելուց ու ակադեմիայի կանոնադրությունը հաստատելուց հետո անմիջապես անցկացնել ակադեմիայի անդամների ընտրություններ, որից հետո նոր անցնել ակադեմիայի կառուցվածքային փոփոխություններին ու ղեկավար կազմի ընտրություններին:

ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, ընդգծելով գիտության կարևորությունը Հայաստանի զարգացման ու առաջընթացի համար, հաշվի առնելով արդեն իսկ կայացած գիտական ավանդույթների պահպանման ու հետագա զարգացման անհրաժեշտությունը և ակադեմիայի առանցքային դերն ու նշանակությունը հանրապետության գիտական և գիտակրթական ընդհանուր համակարգում, իր պատրաստակամությունն է հայտնում շարունակելու իր առաքելությունն ի փառս երկրի գիտական մտքի առաջընթացի, տնտեսության զարգացման ու պաշտպանունակության ամրապնդման»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: «Վստահ եմ, որ այս քննարկումներն արդյունավետ կլինեն և կպատասխանեն այն բոլոր հարցերին, որ այսօր մտահոգում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և իշխանությանը: Մենք ինչպես նախկինում չենք պատկերացրել մեր առօրյան առանց գիտության, հիմա էլ ավելի կախված ենք դառնում գիտությունից: Հաշվետվությունը, որ ես լսեցի

և այն թվերը, որ իմ ձեռքի տակ կան, խոսում են նրա մասին, որ մենք արդեն ունենք ձեռքբերումներ գիտության բնագավառում: Այդ ձեռքբերումները ոչ թե պատահական են եղել, այլ դրանք եղել են հետևողական աշխատանքի արդյունքում»,- ասաց ՀՀ նախագահը: Նա նշեց, որ Հայաստանի Հանրապետությունն ու գիտնականները պետք է հետ չմնան աշխարհի, մարդկության լրջագույն բարեփոխումներից և այդ գործում ներդրում ունենան: «Ես պատկերացնում եմ, որ Հայաստանը, իսկապես, իր տեղը, դերը պետք է ունենա, և այստեղ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան անպայման իր մասնակցությունը պետք է ունենա»,- ասաց Վահագն Խաչատուրյանը:

Անդրադառնալով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծին՝ ՀՀ նախագահը նշեց, որ այն քննարկումների վերջնական փուլում է: «Ես կխնդրեմ ձեզ, որ դուք ավելի ակտիվ լինեք, և ձեր նախաձեռնությունները, առաջարկությունները ներկայացրեք, քննարկեք, պաշտպանեք: Ես՝ ինքս, պատրաստ եմ իմ լիազորությունների շրջանակում նույնպես աջակցել: Ես՝ որպես Հայաստանի Հանրապետության նախագահ, շահագրգռված եմ, որպեսզի իրականում մենք կարողանանք և՛ բարձրագույն կրթության բնագավառում, և՛ առավել ևս գիտության բնագավառում այնպիսի մեխանիզմներ ստեղծել, որպեսզի հետ չմնանք այսօրվա թրենդներից»,- ասաց ՀՀ նախագահը:

Խոսելով գիտության ոլորտի ֆինանսավորման մասին՝ Վահագն Խաչատուրյանը նշեց, որ եթե 2019 թ. գիտության ֆինանսավորումը կազմել է 16.8 միլիարդ դրամ, ապա 2024 թ. եղել է 32 միլիարդ դրամ: «Իրականում այդ ֆինանսական միջոցները կան, եկեք այդ ֆինանսական միջոցներին տեր կանգնենք և արդյունավետ օգտագործենք»,- ասաց ՀՀ նախագահը:

Վահագն Խաչատուրյանն իր ելույթում անդրադարձավ ակադեմիական քաղաքի ստեղծմանը: «Ես պիտի խնդրեմ և՛ ձեր աջակցությունը, և՛ ձեր օբյեկտիվ գնահատականներն ակադեմիական քաղաքի հետ կապված: Դա հնարավորություն է, որը պետք է օգտագործել և օգնել: Հիմնականում ակադեմիական քաղաքը ներկայացվում էր միավորումների ձևով, գաղափարական ընդհանուր մոտեցումը մի կողմ էին թողնում, որը սխալ մոտեցում էր: ...Պետք է փորձել բուհ-գիտություն միավորման ավելի արդյունավետ ձևը գտնել»,- ասաց Վահագն Խաչատուրյանը:

Ամփոփելով ելույթը՝ ՀՀ նախագահը շնորհակալություն հայտնեց գիտնականներին իրենց կատարած աշխատանքի համար: «Մենք միշտ հպարտանում ենք մեր գիտության ձեռքբերումներով»,- ասաց նա:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Արթուր Իշխանյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ 2024 թվականի գիտակազմակերպական գործունեության հաշվետվությունը:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի շրջանակում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որի ընթացքում ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Արսեն Առաքելյանը հանդես եկավ «AMADEE-24 Mars անալոգային առաքելության կենսաբժշկական արդյունքներ» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Վալերի Պետրոսյանը (ՌԴ) ներկայացրեց «Երկիր մոլորակին անհրաժեշտ է էկոկատարսիս» (Планете Земля необходим Экокатарсис) զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Տանիել Դանելյանը (Ֆրանսիա) հանդես եկավ «Շերտագրության կարևորությունը զանգվածային անհետացումների, անցյալի կլիմայի փոփոխության և Երկրի համակարգի գիտությունը հասկանալու համար» (The importance of Stratigraphy inunderstanding mass extinctions, past climatechange and Earth System Science) զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Արմեն Սեդրակյանը (Գերմանիա, Լեհաստան) հանդես եկավ «Կոմպակտ օբյեկտներ և գրավիտացիոն ալիքներ» (Compact objects and gravitational waves) զեկուցմամբ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Սերգեյ Կազարյանը (Մեծ Բրիտանիա)՝ «Նոր ըմբռնում FTIR սպեկտրոսկոպիկ պատկերման տեսանկյունից» (New Insight from FTIR Spectroscopic Imaging) զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Հենրիկ Շահգոլյանը (Շվեդիա) ներկայացրեց «Նվազագույն գործվածքով նորաձև գլխարկ պատրաստելու մաթեմատիկան» (The Mathematics of Crafting a StylishHat with Minimal Fabric) զեկուցումը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանը (ՌԴ)՝ «Հեռանկարային ոչ կատալիտիկ գործընթացներ գազերի քիմիայում» (Перспективные некаталитические процессы в газохимии) զեկուցումը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք

Ս/թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը:

Ժողովի ընթացքում 2024 թ.-ի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները ներկայացրեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքն ունի ՀՀ ԳԱԱ 8 ակադեմիկոս, 6 թղթակից անդամ, 24 արտասահմանյան անդամ, 5 պատվավոր դոկտոր: 2024 թ. բաժանմունքի գիտնականների կողմից հրատարակվել է 5 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 170 հոդված: Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են 3 միջազգային գիտաժողով: Միջազգային ֆինանսավորմամբ իրականացրել է 4 ծրագիր Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում: Հրատարակվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր (4 համար). Մաթեմատիկա» և «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար) հանդեսները, «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը, «ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա) (4 համար), Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուն՝ «Կիբեռնետիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական հարցեր» (2 համար): Բաժանմունքի ինստիտուտների գիտական մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց.

● շարունակել առանձնակի ուշադրություն դարձնել Հանրապետության համար հատուկ նշանակության խնդիրների լուծմանը;

● հատուկ ուշադրություն դարձնել բաժանմունքի ինստիտուտների միջև միջգիտակարգային հետազոտությունների իրականացմանը;

● ընդլայնել բաժանմունքի ինստիտուտների համագործակցությունը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Ռազմարդյունաբերության կոմիտեի հետ;

● առաջարկել «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա», «Mathematical Problems of Computer Science» և «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. տեխնիկական գիտություններ» հանդեսների խմբագրական կազմերին ակտիվ միջոցներ ձեռնարկել «Scopus» շտեմարանի ցուցակային կազմում այդ ամսագրերն ընդգրկելու ուղղությամբ;

● առաջարկել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին գիտական աստիճանաշնորհման ցուցակում ընդգրկված ամսագրերի և հրատարակչությունների համար սահմանել տեղական նշանակության ազդեցության գործոն (impact factor):

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

Ս/թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը ներկայացրեց 2024 թ.-ի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը, Ֆիզիկական հետազոտությունների, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտները և ԻԿՐԱ-ՆԵՏ-Հայաստան միջազգային կազմակերպությունը:

Բաժանմունքն ունի 4 ակադեմիկոս, 10 թղթակից անդամ և 22 արտասահմանյան անդամ: Բաժանմունքի ինստիտուտները ստացել են 3 արտոնագիր: Գիտաշխատողները տպագրել են 4 մենագրություն, 3 հանրապետական ուսումնական ձեռնարկ, 231 հոդված, 151 թեզիս: Բաժանմունքի գիտահետազոտական ինստիտուտներն անցկացրել են 29 միջոցառում, այդ թվում՝ սեմինարներ, միջազգային ու երիտասարդ գիտնականների գիտաժողովներ: Ձևավորվել և գործում են ԳԱԱ Ներդրումային հիմնահարցերի ու հատուկ նշանակության հիմնախնդիրների մասնագիտական խորհուրդներ: Բաժանմունքը հրատարակում է «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. ֆիզիկա», «Աստղաֆիզիկա», «Armenian journal of physics» ամսագրերը:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց.

1. քննարկել կազմակերպությունների՝ տարիներ առաջ հաստատված թեմատիկայի վերանայման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով արդիականությունը, հանրապետության համար կարևորությունը և կադրերով ապահովվածությունը:

2. Կարևորել հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա հանրապետության՝ հատկապես անվտանգային և առողջապահական բնագավառներում կիրառման նպատակով հեռանկարային նորարարական աշխատանքների իրականացումը:

3. Նախատեսել հանրապետական և միջազգային գիտական համագործակցության վերաբերյալ տնօրենների զեկույցներ (5 սեմինար):

4. Կազմակերպել արտասահմանյան գիտնականների սեմինարներ համատեղ իրականացվող հետազոտությունների արդյունքների վերաբերյալ (8 սեմինար):

5. Ձևավորել նախաձեռնող խումբ տիեզերական հետազոտությունների բնագավառի աշխատանքները համակարգելու, միջգիտակարգային ծրագրեր մշակելու և ՀՀ ԳԱԱ նախագահությանն առաջարկներ ներկայացնելու համար:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունք

Ս/թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց 2024 թ.-ի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը, Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Բաժանմունքն ունի 6 ակադեմիկոս, 8 թղթակից և 27 արտասահմանյան անդամ, 12 պատվավոր դոկտոր: 2024թ-ի ընթացքում բաժանմունքի գիտաշխատողների կողմից տպագրվել են 337 հոդված, 19-ը՝ գիտաժողովների նյութերի ժողովածուներում, 172 թեզիս, 3 մենագրություն, 7 ուսումնական ձեռնարկ: Ստացվել է 4 արտոնագիր: Անցկացվել է հանրապետական և միջազգային 35 միջոցառում, որոնց մասնակցել է 1396 մարդ:

Բաժանմունքն անցկացրել է ԳԱԱ կենսաբազմազա- ➢3

ՀՀ ԳԱԱ բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները

➢2 նության և կենսանվտանգության պրոբլեմային խորհրդի 5 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են Երևանում ծառահատման խնդիրները, Սևանա լճի էկոհամակարգին վերաբերող հիմնախնդիրները, բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության և Հայաստանում վիրուսային վարակների արդի խնդիրները:

Երիտասարդների շրջանում գիտության հանրայնացման նպատակով բաժանմունքը նախաձեռնել է «Գիտությունն այսօր» սեմինարների շարք՝ «Չընդհատված ծածկագիր, հայեր», «Ապակոդավորում ենք գենոմը», «Հավաքում ենք փաթիլ. ատոմներից դեպի մոլեկուլ և բյուրեղ», «Սննդակարգ և առողջություն», «Թմրամիջոցները և դրանց հետևանքները», «Ամբողջական գենոմի առաջին հետազոտությունը հայկական պոպուլյացիայում» թեմաներով:

«Գիտության շաբաթ» գիտական փառատոնի, Գիտության օրվա առթիվ ԳԱԱ կազմակերպած ցուցահանդեսի ընթացքում գիտնականները երիտասարդներին ծանոթացրել են իրենց գիտական արդյունքներին:

Բաժանմունքի գիտահետազոտական կազմակերպություններում միջազգային ֆինանսավորմամբ իրականացվել է 41 դրամաշնորհային ծրագիր:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովն ընդունել է որոշում: Որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Առկա են լուրջ խնդիրներ՝ կապված ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների և ՀՀ բուհերի ինտեգրման գաղափարի հեռանկարի հետ: Բաժանմունքի բոլոր կազմակերպությունները համարում են, որ այդ գործընթացի ճանապարհային քարտեզը կազմելիս պետք է հիմնվել աստիճանական և կշռադատված քայլերի վրա: Այդ ինտեգրումը պետք է բխի գիտության, կրթության, ռազմաարդյունաբերության, տնտեսության, անվտանգության և հասարակական տարբեր ոլորտների զարգացման ռազմավարությունից: ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների և ՀՀ բուհերի ինտեգրումը պետք է իրականացվի փուլերով, ռիսկերի գնահատման և կառավարման հստակ մեխանիզմների կիրառմամբ»: Անդրադարձ է կատարվել նաև գիտության հանրայնացման խնդիրներին:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք

Ս/թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը: Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը ներկայացրեց 2024 թ.-ի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի կազմում ընդգրկված են Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի, Մանվել Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի, Երկրաբանական գիտությունների, Արմենակ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը (Օրգանական քիմիայի, Արմենակ Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներ, Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման կենտրոն):

Բաժանմունքն ունի ԳԱԱ 5 ակադեմիկոս, 5 թղթակից անդամ և 16 արտասահմանյան անդամ: 2024 թ. բաժանմունքի ինստիտուտների կողմից տպագրվել են 202 հոդված, 84 թեզիս, 5 մենագրություն և 2 ուսումնական ձեռնարկ: Ստացվել է 11 արտոնագիր:

Անցկացվել է 4 ընդհանուր ժողով, հանձնաժողովի 1 և բյուրոյի 14 նիստ, 5 խորհրդակցություն, ԳԱԱ սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական և տեխնածին աղետների հիմնախնդիրների պրոբլեմային խորհրդի ենթահանձնաժողովի 2 նիստ: Պրոբլեմային խորհրդի ենթահանձնաժողովի նիստերում քննարկվել են «Էկոատոմ» ՍՊԸ-ի ներկայացրած «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա լաք էթինոլի օգտահանման տեխնոլոգիան, հավանության է արժանացել ներկայացված տեխնոլոգիան գործնականում ներդնելու առաջարկությունը, «Փի էս Այ» ՍՊԸ-ի մշակած սենսորային տեխնոլոգիան ու դրա կիրառությունները (հիմնականում սահմանների հսկման համար), հավանության է արժանացել առաջարկվող սենսորային տեխնոլոգիան:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց դրական համարել բաժանմունքի 2024 թ. գործունեությունը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

Ս/թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը ներկայացրեց 2024 թվականի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Պատմության, Արևելագիտության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը:

Բաժանմունքն ունի 5 ակադեմիկոս և 14 թղթակից անդամ:

Բաժանմունքի գիտական կազմակերպությունների աշխատակիցները հրատարակել են 134 գիրք, 16 դասագիրք և ձեռնարկ, 1076 հոդված, 223 թեզիս: Անցկացվել է 36 միջազգային և 21 հանրապետական գիտաժողով:

ՀՀ ԳԱԱ տերմինաբանական հիմնահարցերի մասնագիտական պրոբլեմային խորհուրդը հաստատել է գործունեության հայեցակարգը, գրական հայերենի կանոնարկման հիմնական սկզբունքները, տերմինաշինության ճյուղային հանձնախմբերը: ՀՀ ԳԱԱ պատմագիտության ու մշակութաբանության հիմնահարցերի մասնագիտական պրոբլեմային խորհուրդը ստեղծել է 6 աշխատանքային խումբ, հաստատել գործունեության կարգն ու ուղղությունները:

2024 թվականի ընթացքում հրատարակվել են «Պատմաբանասիրական հանդես», «Բանբեր հայագիտության» և «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականները, թողարկվել է «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային անգլերեն հանդեսի 2 համար: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակել է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդեսը, Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը՝ «Գրականագիտական հանդես», Արվեստի ինստիտուտը՝ «Արվեստագիտական հանդես» պարբերականները:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց. «Հարկ է հիմնավոր և փաստարկված պայքար ծավալել հայկական գիտության՝ իբրև մեր երկրի զարգացման գլխավոր ռեսուրսի, կազմակերպման ավանդական և արդյունավետ ակադեմիական եղանակի պահպանման, դրա էական բարեփոխման ու երկրի տնտեսության, անվտանգության և գիտակրթական սիներգիկ համակարգի վերելքի ապահովման համար»:

Որոշման մեջ նշված է նաև, որ անհրաժեշտ է.

- արդիականացնել հետազոտությունների թեմատիկան
- կարևորել միջգիտակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը
- ընդլայնել և ամրապնդել միջազգային գիտական կապերն ու համատեղ հրապարակումները
- ակտիվացնել և էականորեն ավելացնել հրապարակումները միջազգային գիտական շտեմարաններում
- լայնածավալ աշխատանք կատարել հայկական գիտության կազմակերպման ավանդական ակադեմիական եղանակի պահպանման, դրա լրջագույն բովանդակային բարեփոխման և երկրի տնտեսական, անվտանգային ու կրթական խնդիրների լուծմանը նպաստելու համար:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ նախագահը հյուրընկալեց ՌԴ Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի պատվիրակությանը

Ս/թ. ապրիլի 14-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը հյուրընկալեց ՌԴ Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ռեկտոր Դմիտրի Բեսպալովի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին Հայաստանում ՌԴ դեսպանության խորհրդական, ՌԴ կրթության նախարարության ներկայացուցիչ Միխայիլ Վոժդաևը, համալսարանի միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ալբերտ Կումուկովը: ՀՀ ԳԱԱ-ից հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնակատարներ Արամ Պապոյանը և Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչության ղեկավար Սոֆի Աճեմյանը:

«Մենք կարևորում ենք նման հանդիպումների անցկացումը, որոնք ամրապնդում են գիտական կապերը»,- ասաց Աշոտ Սաղյանը՝ ներկայացնելով ՀՀ ԳԱԱ գործունեությունը:

Աշոտ Մելքոնյանը նշեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի համագործակցության մասին, որի արդյունքում հրատարակվել է 2 մենագրություն, որոնց շնորհանդեսները նախատեսված են առաջիկայում Երևանում և Ստավրոպոլում:

Դմիտրի Բեսպալովը կարևորեց համագործակցությունը ՀՀ գիտական կառույցների հետ և ՀՀ ԳԱԱ նախագահին փոխադարձ այցով հրավիրեց Ստավրոպոլ: Կողմերը քննարկեցին համագործակցության՝ համատեղ կրթական ծրագրերի, գիտաժողովների, դպրոցների կազմակերպման հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՆԱՏՕ-ի ծրագրի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին ցածր դոզայով ճառագայթման ռիսկերը, ընթացիկ հետազոտություններն ու հեռանկարները

Ս/թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 2-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Ցածր դոզայով ճառագայթահարման ռիսկերը. ընթացիկ հետազոտություններ և ապագա հեռանկարներ» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվել էր Կանադայի ՄքՄասթեր համալսարանի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի նախաձեռնությամբ և իրականացվել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի աջակցությամբ:

Գիտաժողովը համախմբել էր առաջատար գիտնականների ԱՄՆ-ից, Գերմանիայից, Լեհաստանից, Կանադայից, Հայաստանից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Նորվեգիայից, Ուկրաինայից, Ֆրանսիայից:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը. «Այս գիտաժողովը բացառիկ հարթակ է ճառագայթային էկոլոգիայի և պաշտպանության ոլորտում վերջին գիտական նվաճումներին ծանոթանալու, գիտական տեղեկատվության և փորձի փոխանակման համար»:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Արսեն Առաքելյանը նշեց. «Հայաստանում այս ուղղությամբ տարբեր հետազոտական խմբերի կողմից իրականացվել են ծավալուն հետազոտություններ: Օրինակ, էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնն ուսումնասիրում է երկրաքիմիական և էկոլոգիական ասպեկտները, Երևանի պետական համալսարանում կենսաբանական մարկերներին ուղղված հետազոտություններ են իրականացվում, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում այս ոլորտում իրականացվող հետազոտությունները նվիրված են ճառագայթահարման կիրառմանը քաղցկեղի բուժման ժամանակ, այդ ընթացքում առողջ հյուսվածքների արձագանքին ճառագայթահարմանը: Ուսումնասիրում ենք նաև տիեզերական ճառագայթման ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Մենք տեսնում ենք, որ երկարատև տիեզերական առաքելությունները դառնում են իրականություն: Տիեզերական ճառագայթումը խիստ տարբերվում է երկրի մակերեսի ճառագայթումից, որը գամմա ճառագայթում է, և մենք ուսումնասիրում ենք այդ ազդեցությունները»,- ասաց Արսեն Առաքելյանը:

Գիտաժողովի բանախոսները հանդես եկան ցածր դոզայով ճառագայթահարման կենսաբանական ազդեցության, ռադիոէկոլոգիայի, ռիսկերի գնահատման մեջ էկոթունաբանության և կենսամարկերների դերի, ճառագայթային պաշտպանության ժամանակակից մոտեցումների, կարգավորող մարմինների և գիտական համայնքի փոխգործակցության հեռանկարների մասին զեկուցումներով:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հայ տնտեսագիտական մտքի վաստակաշատ հետազոտողը

Լրացավ անվանի տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ներսեսի Սարինյանի 85-ամյակը: Ծնվել է 1940 թ. հունվարի 20-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սեյտիշեն (Խաչեն) գյուղում:

1963-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Խորհրդային բանակում ծառայելուց հետո՝ 1965-68-ին, աշխատել է ԽՍՀՄ շինարարական բանկի հայկական գրասենյակում՝ որպես ավագ տնտեսագետ: 1968-ից աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) քաղաքատնտեսության (այժմ՝ տնտեսագիտության) ամբիոնում՝ որպես կաբինետի վարիչ, ասիստենտ, ավագ դասախոս, իսկ 1979-2014 թթ.՝ ամբիոնի վարիչ (2007-ից՝ համատեղությամբ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ բաժնի վարիչ), 2015-ից ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող:

Ռ. Սարինյանը 1976-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ավետիք Արասխանյանի տնտեսագիտական հայացքները» թեմայով, իսկ 1985-ին՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները XIX դարի 70-90-ական թվականներին» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսոր է 1987-ից:

Ռոբերտ Սարինյանը երեք տասնյակից ավելի մենագրությունների, երեք ուսումնական ձեռնարկների և հարյուր քառասունից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Նրա հետազոտական ոլորտները վերաբերում են հայ տնտեսագիտական մտքի պատմության, տնտեսագիտական ուսմունքների պատմության, տնտեսագիտության տեսության և ազգային տնտեսության հիմնահարցերին: Հայալեզու և օտարալեզու հրապարակումներով հանդես է եկել ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային բազմաթիվ գիտաժողովներում:

Պրոֆ. Ռ. Սարինյանը XX դարի սկզբի հայ տնտեսագիտական մտքի պատմության վերաբերյալ «XX դարի սկզբի հայ տնտեսագիտական մտքի ուղեգծերում», «Հայ միտքը և տնտեսական զարգացումը», «Ալեքսեյ Չիվելեգովի տնտեսագիտությունը», «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» (համահեղինակ՝ Լ. Հարությունյան), «Բախշի Իշխանյան (տնտեսագիտական հայացքները)», (համահեղինակ՝ Ա. Թադևոսյան) ուսումնասիրություններում, օգտագործելով փաստական նոր տվյալներ և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով նոր նյութեր, անդրադարձ է կատարում տնտեսական ճգնաժամերի տեսության ու պատմության մեծագույն տնտեսագետներից մեկի՝ Մենտոր Բունիաթյանի հայեցությանը, Վահան Տոտոմյանցի՝ կոոպերացիայի վերաբերյալ աշխատություններին, Ալեքսեյ Չիվելեգովի՝ Եվրոպայի տնտեսական էվոլյուցիային և մարդու նոր պահվածքին առնչվող դիտարկումներին, Դավիթ Անանունի՝ ռուսահայերի հասարակական զարգացման հետագծի և հավաքական հայության գաղափարներին, Ռուսաստանի ու Կովկասի առանձնահատկությունների մասին Միքայել Վարանդյանի քննադատական մտորումներին, Սիմոն Զավարյանի ուսումնասիրություններին և այլն, որոնք ընդլայնեցին հայ տնտեսագիտական արծարծումների տեսական ու պատմական ոլորտները, տնտեսական կյանքի ճանաչողական սահմանների վերաբերյալ իմացությունն ու պատկերացումները:

Վերջին տասնամյակների ընթացքում պրոֆեսորը պարբերաբար անդրադարձել է արդի հայ տնտեսագիտական մտքի կացությանը, փորձել «տեսություն» կոչված հրապարակումների ձևով ուրվագծել կատարվող տեղաշարժերը: Լույս են տեսել Ռ. Սարինյանի «Ազգային տնտեսությունը և տնտեսագիտական միտքը», «Արդի հայ տնտեսագիտության տեսություն» (երեք գրքով), «Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության» (երկու հատորով), «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016» (Վ. Հարությունյան, Ռ. Սարինյան) աշխատությունները: Դրանք հստակ պատկերացում են տալիս նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի՝ այդ ոլորտի դիտակետերի, նոր որոնումների, սահմանազատումների ու շարժման ընթացքի վերաբերյալ՝ գրված ոչ թե սոսկ գրանցումների սկզբունքով, այլ քննական հայացքով:

Ռ. Սարինյանը նաև «Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր» աշխատության հեղինակներից է, որտեղ նա ներկայացնում է նոր շրջանի հայ կառավարչական մտքին առնչվող բաժինը: Նա կարևոր ներդրում ունի տնտեսագիտության և տնտեսագիտական ուսմունքների պատմության ուսումնական ու գիտական գրականության ստեղծման բնագավառում: Ուշագրավ է «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան» (հեղինակներ՝ Ռ. Սարինյան, Վ. Հարությունյան) աշխատությունը:

Պրոֆեսոր Սարինյանն ունի գիտամանկավարժական բազում տարիների փորձ: Տարիներ շարունակ «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածուի գլխավոր խմբագիրն է: Մեծ են նրա դերն ու վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում:

Ռոբերտ Սարինյանը պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով (1983), «Մովսես Խորենացի» մեդալով (2003), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) ոսկե հուշամեդալով (2008), ՀՀ ԳԱԱ հուշամեդալով՝ նվիրված Ակադեմիայի հիմնադրման 80-ամյակին (2023):

Ջերմորեն շնորհավորում ենք անվանի գիտնականին՝ ծննդյան հոբելյանի առիթով: Ցանկանում ենք երկար տարիների կյանք, քաջառողջություն, անսպառ եռանդ, գիտական նորանոր ձեռքբերումներ:

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար
Մերի ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

Մեծ Հայրենականի անխոնջ պատմագիրը

Պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության հետազոտության նվիրյալ տարեգիր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը 85 տարեկան է:

Ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Կապան քաղաքում: 1961-1966 թթ. սովորել ու գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը: 1966-1968 թթ. Կ. Հարությունյանն աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում՝ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1968 թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 1971 թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատողից հասնելով գլխավոր գիտական աշխատողի պաշտոնին: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական, 1994 թ.-ին՝ դոկտորական ատենախոսություններ:

Կ. Հարությունյանի դոկտորական ատենախոսությունը՝ «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.», ըստ էության, հայկական զինուժի շինարարության ընդհանրացնող պատմությունն է վերոհիշյալ ժամանակաշրջանում: Ատենախոսությունը 2002 թ. հրատարակվել է որպես մենագրություն: Վաստակաշատ պատմաբանի հիմնակազմ աշխատություններից է նաև 2004 թ. ռուսերենով լույս տեսած «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» ստվարածավալ մենագրությունը, որտեղ հայ պատմագրության մեջ առաջին անգամ բազմակողմանի լուսաբանվել է Մեծ հայրենականին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Այս մենագրության համար Կ. Հարությունյանն արժանացել է ՌԴ ԳԱ նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի տնօրինության «Պատվավոր դիպլոմի» ու դրամական պարգևի: Նրա գրչին են պատկանում նաև մարշալներ Ի. Ք. Բաղրամյանի, Հ. Խ. Բաբաջանյանի, Ս. Ա. Խուդյակովի (Ա. Ա. Խանփերյանց) և Ս. Ք. Ագանովի մասին ռուսերենով գրված մենագրությունները: Առաջին անգամ Կ. Հարությունյանն է ուսումնասիրել ՌԴ անվտանգության ծառայության արխիվի ու Ռուսաստանի ռազմական կոլեգիայի գերագույն դատարանի գաղտնի նյութերը և ուշագրավ աշխատություն ստեղծել ավիացիայի հայ մարշալ Ս. Ա. Խուդյակով-Ա. Ա. Խանփերյանցի մասին:

Կ. Հարությունյանը 2001 թ. հրատարակել է «Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքն ու գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» մենագրությունը, որտեղ հայ պատմագրության մեջ դարձյալ առաջին անգամ նորահայտ արխիվային փաստերի, մամուլի նյութերի ու ժամանակակիցների հուշերի հիման վրա լուսաբանել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Անվանի պատմաբանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում Ստալինգրադի, Լենինգրադի, Կուրսկի և Մոսկվայի ճակատամարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցերը, որոնք առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն:

Կ. Հարությունյանի տեսադաշտից չեն վրիպել նաև Հայրենական մեծ պատերազմին Արցախի և Զավախքի հայության մասնակցության հարցերը: 2009 թ. արխիվային նորահայտ փաստերի հիման վրա ռուսերեն հրատարակել է «Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)» մենագրությունը: 2014 թ. Կ. Հարությունյանը հրատարակել է «Զավախքահայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» մենագրությունը:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Կ. Հարությունյանը սերտ համագործակցում է նաև Ռուսաստանի ու Բելառուսի իր գործընկերների հետ: Արդյունքում 2010 թ. Մինսկում լույս է տեսել «Խորհրդային Միության հայ հերոսները Բելառուսի համար մղված մարտերում (1941-1944)» աշխատությունը (Ա. Մ. Լիտվինի համահեղինակությամբ): 2010 թ. Երևանում ռուսերենով հրատարակված «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945)» աշխատության (համահեղինակ՝ Հ. Ռ. Պողոսյան) առաջաբանը գրել է ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Կումանյովը:

Մոտ կես դար աշխատելով Ռուսաստանի ռազմապատմական արխիվներում՝ Կ. Հարությունյանն զգալի ավանդ ունի արխիվային մի շարք փաստաթղթերի և նյութերի ժողովածուների կազմման գործում: Անվանի պատմաբանն ակտիվորեն մասնակցել է նաև Խորհրդային Հայաստանից Հայրենական մեծ պատերազմում զոհված հայերի անուններն ամփոփող «Հուշամատյան» քառահատորյակի պատրաստման աշխատանքներին, հեղինակ է «Հայկական ազգային ատլաս»-ում և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս»-ում երկու քարտեզների, որոնք վերաբերում են Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցությանը:

Կ. Հարությունյանը Մ. Սահակյանի հետ 1988 թ. հրատարակել է «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի» գիրքը, որտեղ առաջին անգամ լուսաբանվել են ՀԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մարտական սխրանքներն ու աշխատանքային գործունեությունը: Այդ գիրքը (որոշ լրացումներով) ռուսերենով հրատարակվել է 2001 թ.-ին:

Ամբողջական չէր լինի Կ. Հարությունյանի գիտական կենսագրությունը, եթե չնշվեր, որ նա, ընդհանուր առմամբ, հրատարակել է 45 աշխատություն, շուրջ 200 գիտական և հրապարակախոսական հոդվածներ: Պատմաբանը մասնակցել, զեկուցումներով հանդես է եկել մի շարք միջազգային ու հանրապետական գիտաժողովներում:

Գիտական բեղմնավոր աշխատանքի համար Կ. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Ծովակալ Իսակով», ՌԴ «Միխայիլ Շոլոխով» և այլ մեդալներով, ՀՀ ԳԱԱ «Գովեստագրով» ու «Վաստակագրով», ԱՊՀ երկրների վետերանների միության «Պատվո նշանով»:

Սրտանց շնորհավորելով ավագ գործընկերոջս՝ նրան մաղթում եմ քաջառողջություն ու գիտական նոր ձեռքբերումներ:

Անուշավան ՁԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

«Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում» ժողովածուի շնորհանդեսը



Ս/թ. ապրիլի 17-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում» ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուն կազմել է ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության պետ Կամո Աթայանը և ներկայացրեց ժողովածուն ու վարչության ծրագրերը:

«Մատաղ սերնդի հետաքրքրությունը գիտության նկատմամբ ընկնում է, ինչը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Ստեղծվում են հատուկ ստորաբաժանումներ, վարչություններ, որ կարողանան գիտության արգասիքները հնարավորինս հանրամատչելի ներկայացնել հանրության տարբեր շերտերին: Մեր նորաստեղծ վարչությունը սկսեց ծրագրեր մշակել այդ ուղղությամբ: Գաղափարներից մեկը հենց այս գրքին էր վերաբերում: Ժողովածուում զետեղված են հայտնի գիտնականների հետ հարցազրույցներ, որտեղ ներկայացված են մեր գիտնականների կարծիքները գիտության հանրամատչելիացման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև հանրամատչելի գիտական նյութեր: Ժողովածուն անդրադառնում է գիտական ուղղությունների հանրամատչելիացման նրբություններին և մեխանիզմներին, գիտության հանրայնացման արդի խնդիրներին»,- ասաց Կամո Աթայանը:

Շնորհանդեսին մասնակցեցին և ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիդա Սահակյանը, ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության առաջատար մասնագետ Արթուր Ղարագյոզյանը և ուրիշներ:

Շնորհանդեսի մասնակիցները կարևորեցին գրքի հրատարակումը, ներկայացրին գիտության հանրայնացման, գիտական արդյունքների հանրամատչելի ներկայացման իրենց փորձը, խոսեցին գիտական լրագրության զարգացման կարևորության, բնական և ճշգրիտ գիտությունների նկատմամբ երիտասարդ սերնդի հետաքրքրության բարձրացման անհրաժեշտության մասին:

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Մտավորականի ձայնը պետք է լսելի լինի

Թե ուզում ես երգդ լսեն՝ ժամանակիդ շո՛ւնչը դարձիր...

Եղիշե Չարենց

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում, հատկապես նոր և նորագույն շրջանում, ընտրյալ մտավորականության պակաս երբեք չի ունեցել: Նրա բեղուն արգանդը ծնունդ է տվել տաղանդաշատ ու հայրենասեր մտավորականների մի ամբողջ համաստեղության: Մտավորականներ, որոնք անգամ ամենադժվարին ու ճակատագրական վայրիվերումների ժամանակ ապրել, ստեղծագործել ու պայքարել են հանուն հայրենյաց:

Մասնագիտական աշխատանքից բացի իսկական մտավորականը պետք է լինի իր ժողովրդի իղձերի արտահայտիչը, շահերի պաշտպանը, հոգսերի նեցուկն ու ուղղորդողը: Մեր երկրի համար այս բարդ ժամանակաշրջանում, գիտության և մշակույթի մի շարք հայտնի գործիչներից բացի, մեր մտավորականությանը դեռևս չի հաջողվում ստանձնել նման առաքելություն: Լավագույն դեպքում լինում են մտավորականների առանձին խմբերի տեղային պոռթկումներ, երբ կայացվում են իրենց կազմակերպությունների շահերն անտեսող որոշումներ (օրինակները շատ են): Սակայն համազգային նպատակներին հետամուտ լինելու առումով մեր մտավորականությունը չի դրսևորում միասնական և ընդհանրական մոտեցումներ, և նա տակավին առաջնորդվում է տնամերձի հոգեբանությամբ:

Բացի Հայաստանի ժուռնալիստների միությունից, քաղաքացիական սեփական դիրքորոշումն արտահայտելու առումով մեր ստեղծագործական մյուս միություններում անբացատրելի անդորր է: Լուռ են գրողները, նկարիչները, ճարտարապետները, թատերական գործիչները, մյուսները: Ավագ սերունդը լավ է հիշում, թե ինչպիսի ազդեցություն էին ունենում Գրողների միության և ԵՊՀ-ի ժողովները, և թե ինչպիսի երկյուղածությամբ էին դրանց մասնակցում երկրի առաջին դեմքերը: Քանակական և որակական հզոր ներուժ ունեցող այդ միությունները կարող են և պետք է կամրջող դերակատարում ունենան տարբեր բնագավառներում աշխատող մտավորականությանը համախմբելու գործում:

Վերջին տարիների ցավալի իրադարձություններից հետո իշխանությունների անհեռատես ու իրականությունից կտրված քաղաքականությունը, պատմական հիշողության վերաարժևորման շարունակական փորձերը և ապազգային քարոզները ժողովրդի մի որոշակի հատվածի մոտ պարարտ հող են ստեղծում մեր անցյալի, ներկայի և ընդհանրապես մեր ինքնության վերաբերյալ խեղաթյուրված ըմբռնումների ծլարձակման համար: Դա լուրջ սպառնալիք է, արտաքին վտանգներին չզիջող մեկ այլ՝ ներքին վտանգ, որը հասարակության խորացող բևեռացման պայմաններում կարող է վերաճել նրա ընդհանուր դեգրադացիայի և դառնալ ազգային դիմագծի անդառնալի կորստի պատճառ:

Մեր ժողովուրդն այսօր բարոյահոգեբանական ծանր վիճակում է: Նրա մի փոքր հատվածն ինքնամոռաց տարփողում է իշխանավորներին, ընդդիմադիր հատվածը ամբիցիաներից ելնելով չի ցանկանում համատեղել իր ուժերը, իսկ բնակչության ճնշող մեծամասնությունն ընդհանրապես հիասթափված է ամեն ինչից ու անհաղորդ՝ ամենքին: Քաոսային այս մղձավանջին վերջ դնելու համար ազգային համերաշխության գաղափարը պետք է դարձնել օրակարգային, փակել մեր սեփական ինքնաոչնչացմանը տանող բոլոր խութերը: Դրանք պետք է դառնան մեր մտավորականության գործունեության առաջնահերթությունները: Իսկ նրա գերխնդիրը պետք է լինի՝ չթողնել ժողովրդին մենակ, տեր կանգնել նրան:

Հայոց հազարամյա պատմության ընթացքում ունեցել ենք բազում վերելքներ ու վայրէջքներ, զրկվել ենք պետականությունից, ենթարկվել ցեղասպանության և հայրենազրկման: Այդ բոլոր արհավիրքներին հայ ժողովուրդը դիմակայել է շնորհիվ իր ոգու, լեզվի, հավատքի և հայրենասիրության: Այդ ազգային արժեքները դարեդար փոխանցվել են սերնդեսերունդ: Այսօր իշխանության ամենաբարձր օղակներում ամեն ինչ արվում է դրանք իմաստազրկելու, ժողովրդին արհեստածին և կեղծ «արժեքներ» հրամցնելու ուղղությամբ: Իրենց ամենագետ համարող, բայց սահմանափակ մտածելակերպով օժտված որոշ «գործիչներ» իրենց իրավունք են վերապահում պատմության դասեր տալու մեր ժողովրդին: Ամենուր մեղավորներ հայտնաբերելու փնտրտուքով փորձ է արվում անգամ ներխուժելու Հայոց ցեղասպանության պատմական իրողության դաշտ:

Հանուն մեր ինքնության, մեր նախնյաց հիշատակի և ապագա սերունդների անհրաժեշտ է դուրս գալ անտարբեր ու հանդուրժող դիտորդի դերից, միասնաբար դիմագրավել ահագնացող մարտահրավերներին: Դա բոլորիս և առաջին հերթին մեր մտավորականության՝ ժողովրդի առջև ունեցած բարոյական պարտքն է:

Այս հարցերին քանիցս անդրադարձել ենք մեր թերթի էջերում, քաղաքացիական առավել ակտիվ դիրքորոշման կոչ ուղղել գիտական հանրության ներկայացուցիչներին, ինչին և ծառայում է թերթի «Մտքերի հարթակ» խորագիրը կրող բաժինը: Մեր մի շարք անվանի գիտնականներ և փորձագետներ այս հարթակն արդեն օգտագործել են գիտության և կրթության, Արցախյան հիմնահարցի, Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման և այլ խնդրահարույց ու կենսական հարցեր բարձրաձայնելու նպատակով:

Անորոշ և հարցականներով լի է նաև մեր գիտության վաղվա օրը, մասնավորապես անմխիթար վիճակում է հայտնվել հայագիտությունը: Էլ չենք խոսում ներկայիս քաղաքական-հասարակական աննորմալ իրավիճակի մասին, ինչն աշխարհաքաղաքական նոր իրավիճակներում մեր երկրի ազգային շահերն անտեսող ապաշնորհ քաղաքականության հետևանքն է: Հասկանալի է նաև իշխանության ծրագրերին մեր գիտական համայնքի ոչ համարժեք արձագանքը (հավանաբար ֆինանսական և այլ լծակների հնարավոր կիրառման վտանգով պայմանավորված): Բայց այսպես շարունակվելու դեպքում մեկ տարի անց շատ շատերի համար այդ վտանգը կդառնա տխուր իրողություն:

Առավել քան երբևէ մեր հանրությունն այսօր պառակտված է, ինչու չէ, նաև մտավորականությունը: Հակառակ դեպքում նա չէր հանդուրժի «Կրթվելը նորածև է» անհեթեթ «հայտնագործության» հեղինակներին՝ ստանձնելու մշակութային և կրթական դարավոր հարուստ պատմություն ունեցող մեր ժողովրդին կրթելու «առաքելությունը»: Մինչդեռ ամենաբարձր ամբիոնից վերջերս հնչած խոստովանությունից պարզվեց, թե ովքեր են կրթողները՝ «7 տարի նույն դասարանում մնացած տգետներ»: Առավել դիպուկ բնութագրում դժվար թե գտնեիք: Ի դեպ, ինչեր ասես չենք լսել այդ ամբիոնից, իսկ վերջերս էլ յուրօրինակ պարային պոռթկումի ականատեսը դարձանք:

Ժամանակն է, որ հընթացս հասարակական-քաղաքական զարգացումների, մեր մտավորականությունը դրսևորի քաղաքացիական հստակ դիրքորոշում և այն բարձրաձայնելու խիզախություն: Տեղին է հիշել Ն. Նեկրասովի թևավոր դարձած խոսքերը. «Բանաստեղծ դու կարող ես չլինել, բայց քաղաքացի պարտավոր ես լինել»:

Հուսանք, որ վերջերս հիմնադրված «Հայոց Տուն» համահայկական միավորմանը կհաջողվի համախմբել գիտության, մշակույթի, կրթության և այլ բնագավառների աշխատողներին՝ համատեղ հաղթահարելու այն դժվարագույն շրջափուլը, որում հայտնվել ենք ազգովի:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրվել է «Հայոց Տուն» համահայկական միավորումը

Ս.թ. մարտի 27-ին մի խումբ հայ մտավորականներ հայտարարեցին «Հայոց Տուն» ապակուսակցական համահայկական միավորման ստեղծման մասին: Նրանք հանրությանն են ներկայացրել միավորման ծրագրային նպատակներն ամփոփող ուղերձի հետևյալ տեքստը.

Հաշվի առնելով

Հայոց պետականությանը, ազգային ինքնությանը, հոգևոր և մշակութային արժեքներին սպառնացող մարտահրավերները, մասնավորապես՝

- Աշխարհակարգի սրընթաց փոխակերպումն ու աշխարհաքաղաքական հակամարտությունների աննախադեպ սաստկացումը,
- Արցախի բռնազավթումը, Հայաստանում ներքին հակասությունների խորացումը և բնակչության սոցիալական վիճակի հարաճուն վատթարացումը,
- Հոգևոր և ազգային ավանդական արժեքների անկումն ու հայկականության նահանջը,
- Երկրում քաղաքական համակարգի անկատարության համատեքստում կենսունակ գաղափարախոսության բացակայությունը:

Գիտակցելով

- Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանն ու Հայ ինքնությանը սպառնացող ներքին և արտաքին վտանգները հաղթահարելու հրամայականը,
- Հայ ժողովրդի անվտանգության ու Հայոց պետականության կայացման առաջնահերթությունը,
- Հայության միավորման առաքելությունը կյանքի կոչելու նպատակով ազգային ընտրանու անհրաժեշտությունը:

Համոզված լինելով, որ

- Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի առջև ծառացած գոյաբանական մարտահրավերները հնարավոր է հաղթահարել միայն Հայության համախմբման ու ազգային ուժերի գերլարման շնորհիվ միասնական նպատակի՝ Հայոց պետության զորացման և իրական համազգային շահերին ծառայող Հայկական պետականության կայացման շուրջ:
- Համազգային խորքային ճգնաժամից հնարավոր է դուրս գալ միայն Ազգային ընտրանու համախմբման՝ Հայաստանի և Սփյուռքի տարբեր բնագավառների փորձառու, կայացած և ազգային դիմագիծ ունեցող գործիչների անմիջական ներգրավման միջոցով:

Ազդարարում ենք

«Հայոց Տուն» համահայկական միավորման հիմնադրման մասին:

«Հայոց Տունը» ապակուսակցական կառույց է՝ Հայությանն ու Հայոց պետականության գաղափարին նվիրված և փորձառու գործիչների ներգրավմամբ:

«Հայոց Տունը» առաջնորդվելու է անմնացորդ հավատքով, ազգային արժեքներով ու Հայ ոգեղեն ուժի հենասյուներով՝ Միասնությամբ, Համերաշխությամբ և Սիրով:

«Հայոց Տունը» նախաձեռնելու է անվտանգության, արտաքին ու ներքին քաղաքականության, տնտեսության, բարձր տեխնոլոգիաների, հոգևոր, մշակույթի, գիտության, կրթության և այլ ոլորտներում կայացած ու շահագրգիռ հայ մասնագետների միավորումը՝ Հայկական պետականության ու Հայության ազգային ռազմավարության հիմնադրույթների մշակման նպատակով:

«Հայոց Տունը» նպաստելու է հայ երիտասարդության ներուժի բացահայտմանը՝ միտված Հայաստանի և հայ ազգի բարգավաճմանը:

Նորաստեղծ միավորման ուղերձը ստորագրել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, գիտության դոկտորներ, ինչպես նաև մշակույթի, կրթության, սպորտի և այլ ոլորտների թվով 20 ներկայացուցիչներ:

Անկասկած, «Հայոց Տունը», որը նախաձեռնվել է Հայաստանի և Սփյուռքի մտավորականության ներկայացուցիչների կողմից, նպաստելու է Հայոց ընտրանու համախմբմանը, ազգային միասնականության խթանմանն ու ներուժի լիարժեք բացահայտմանը ի նպաստ հայկական պետականության քվանտային զարգացման ու զորացման:

«Հայոց Տունը» ապաքաղաքական, վերկուսակցական կառույց է, որի հիմնական նպատակն է միավորել Հայության ողջ ներուժը՝ ազգային գաղափարաբանության և տարբեր ոլորտների զարգացման ռազմավարությունների մշակման նպատակով:

Ուստի, «Հայոց Տունը» փորձելու է միավորող հարթակ դառնալ տարբեր բնագավառներում Հայաստանում և Սփյուռքում արդեն իսկ կայացած և իրենց ազգանվեր ու պետականամետ գործունեությամբ հայտնի անհատների և միմյանցից անկախ գործող միավորների համար: «Հայոց Տունը» նպատակադրված ծրագրերով նպաստելու է արդյունավետ գործող Համահայկական համակարգի ստեղծմանը:

Համահայկական նորաստեղծ միությանն արդեն իսկ միացել են գիտության, մշակույթի, արվեստի, կրթության, սպորտի և այլ բնագավառների ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմաթիվ վաստակաշատ հայեր Սփյուռքից:

Ռուբեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«Հայոց Տուն» հ/մ հիմնադիր անդամ

Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը սերունդների համառ պայքարի արդյունքն էր

Մեր ժողովրդի համար սրբազան ու նվիրական վայր է դարձել Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացող Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, որը նաև բարձր արվեստի եզակի ստեղծագործություն է:

Այս հուշահամալիրը մեր ժողովրդի հոգու ճիչն է, նրա ոգեղեն բողոքն ու ցասումը՝ ուղղված ցեղասպան ոճրագործների և անարդար աշխարհի դեմ: Այն համայն հայության պատմական հիշողության մարմնացումն է:

Սակայն ծանրագույն, համառ ու դժնդակ պայքարի շնորհիվ է ձեռք բերվել այս հաղթանակը՝ ընդդեմ հայրենիքի ուրացման և պատմական հիշողության ոչնչացման: Մինչև 1960-ական թվականները Հայաստանում արգելանքի տակ էր ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հետ կապված ամեն ինչ, ամեն մի մասունք և հիշողության պատառիկ: Թուրքերը դա կարողանում էին վերահսկել մոսկովյան Կրեմլի միջոցով: Եվ դա նրանց հաջողվում էր զգալի ժամանակ:

Լռության պատնեշի խորտակումը

Հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ցեղասպանության կեսդարյա տարելիցը լրանում էր 1965 թվականի գարնանը: Սփյուռքի հայությունն ամեն ջանք գործադրում էր, որ այն արձագանք գտնի աշխարհի ժողովուրդների հիշողության մեջ: Եվ ավելին՝ այդ ոճրագործությունը դատապարտվի մարդկության կողմից: Ոտքի կանգնեց նաև Խորհրդային Հայաստանի հայությունը, որքան էլ որ այն անհնարին էր թվում: Գրողներ, նկարիչներ, հրապարակախոսներ էին հայտնվում, որոնք այլևս մտադիր չէին հոգու անտանելի ցավը լռությամբ կրելու: Այդ ամենի համախումբ մարմնացումը եղավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը, որը զորեղ հարված եղավ լռության պատնեշին:

Մեր ժողովրդի հիշողությունը հուշարձան դարձավ ոչ միայն գրական գործերում, այլև մարդկանց հոգիներում և թրի նման մխրճվեց դեպի հայոց երկինք: 1965 թվականից հետո, երբ Սփյուռքի ջանքերով աշխարհում, այնուամենայնիվ, շատ թե քիչ մասշտաբներով նշվեց Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, Խորհրդային Հայաստանում ևս փոփոխություններ տեղի ունեցան հանրային գիտակցության և հոգեբանության մեջ: Երևանը ընդվզեց, և լռության պատնեշը խորտակվեց 1965 թվականի ապրիլքսանչորսյան հուժկու պոռթկումով, որը ցնցող տպավորություն թողեց Խորհրդային Միությունում:

Հուշահամալիրի կառուցումը

Ոմանց համար գուցե զարմանալի թվա, բայց իրական փաստ է, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները

նախօրյակին արդեն մտորել և նախանշել էին Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ կատարվելիք աշխատանքների սցենարը: Դրան նաև նպաստել էին երկրի պետական մի շարք բարձր պաշտոններում հայրենանվեր մտավորականների նախաձեռնություններն ու միջնորդությունները:

Այսպես, դեռևս 1964 թ. հուլիսի 16-ին պատմաբան Ծ. Աղայանի (Մարքսիզմ-լենինիզմի հայկական մասնաճյուղի տնօրեն), Հ. Ինճիկյանի (ԳԱ-ի արևելագիտության ինստիտուտի սեկտորի վարիչ), Զ. Կիրակոսյանի (ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ) նախաձեռնությամբ և ստորագրությամբ գաղտնի նամակ է հղվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի նախագահությանը՝ Մեծ եղեռնի հիսունամյա տարելիցը պատշաճ ոգեկոչելու կապակցությամբ:

Այդ ժամանակ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարն էր հայրենանվեր և լայնախոհ պետական գործիչ Յակով Զարոբյանը, որն արմատներով սերում էր հինավուրց հայաշատ Արդվին քաղաքից: Զարոբյանը վերոնշյալի կապակցությամբ 1964 թ. դեկտեմբերի 13-ին դիմում է հղում Մոսկվա՝ ԽՄԿԿ Կենտկոմ: Դիմումում նշվում և հիմնավորվում էր Առաջին համաշխարհային պատերազմի նահատակների հիշատակին Երևանում հուշարձան կառուցելու անհրաժեշտությունը: Մոսկովյան Կրեմլի ղեկավարների բարյացակամությունը ստանալու նպատակով չէր գործածվում «Մեծ եղեռն» արտահայտությունը: Այդ «դաբրոն» ստանալուց հետո Երևանում ավելի վճռական են գործում: Մեկ տարի անց Զարոբյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից, որում քիչ դեր չխաղաց այս հուշարձանի կառուցման գործում նրա հայանպաստ ներդրումը:

1965 թ. մարտի 16-ին Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհուրդը որոշում է կայացնում Երևանում կառուցել հուշահամալիր՝ Հայոց եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար: Հենց սկզբից հուշահամալիրի կառուցումը ձեռք է բերում համաժողովրդական և համազգային բնույթ և նշանակություն: Խորհրդային Հայաստանի բնակչությունն ու սփյուռքահայությունը քաջ գիտակցում էին, որ ծրագրվող հուշահամալիրով հայությունը ճեղքելու է Մեծ եղեռնի շուրջ հյուսված դավադիր լռությունը:

Հուշահամալիրի կառուցումն անցնում է առանց էական խոչընդոտների և միջադեպերի: Շատերն էին ցանկանում անվճար աշխատել այդ կառույցի շինարարությունում: Աշխատանքներն սկսվում են 1966 թ. սկզբից և տևում մինչև հաջորդ տարվա՝1967 թվականի աշուն: Կառույցի ճարտարապետներն էին երիտասարդ ու տաղանդավոր այրեր Արթուր Թարխանյանը, Սաշուր Քալաշյանը, քանդակագործ Վան Խաչատուրը: Հուշահամալիրի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1967 թ. նոյեմբերի 29-ին ՀԿԿ Կենտկոմի ողջ շքախմբի մասնակցությամբ: Ծաղկեպսակներ տեղադրելու արարողությունից հետո տեղի է ունենում միտինգ, որից հետո հայ ժողովրդի ևս մեկ նվիրյալ զավակ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը վառում է հուշարձանի անմար կրակը:

Հուշահամալիրը՝ սրբազան ուխտատեղի

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը ոչ միայն մայրաքաղաքի տեսարժան վայրերից է, այլև իսկական ուխտատեղի է դարձել հարյուր հազարավոր հայերի համար: Բացի ապրիլի 24-ից, երբ զանգվածային երթ է կատարվում դեպի հուշահամալիր վաղ առավոտից մինչև ուշ երեկո, այստեղ երբեք այցելուների պակաս չի լինում ողջ տարվա ընթացքում՝անկախ եղանակային պայմաններից:

Աշխարհի ողջ հայության և նրա համախոհների և բարեկամների հայացքը միշտ ու մշտապես ուղղված է սրբացած համալիրին: Այն բացառիկ ուխտատեղի է ամբողջ ազգության, ողջ ժողովրդի համար:

Եվ թերևս Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում միայն այս կետից նայելիս երևում է ոչ միայն սահմանամերձ ալեհեր Արարատը շրջակայքով, այլև ...ողջ Արևմտյան Հայաստանը՝ մինչև Եփրատ, Ճորոխ ու Տիգրիս: Ողջ հայությունն է այս կետից հենց այսպես, այս կերպ դատում և մտորում մեր ժողովրդի հետագա ճակատագրի և հետագա դարերի շուրջ...

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Արտաշատում պեղվել է 4-րդ դարի առաջին կեսի եկեղեցի

Ս/թ. մարտի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը ներկայացրեց 2024 թ. իրականացրած պեղումների և հետազոտությունների արդյունքները:

Ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը նշեց, որ 2024 թվականի ընթացքում պեղվել և ուսումնասիրվել է Հայաստանի 30 հնավայր, որոնք ընդգրկում են ժամանակագրական լայն շրջանակ՝ սկսած նախապատմական շրջանից մինչև ուշ միջնադար:

«Ամենակարևոր արդյունքն արձանագրվել է Արտաշատում: Հայ-գերմանական արշավախումբը պեղել է եկեղեցի, որը թվագրվում է 4-րդ դարի առաջին կեսով, ինչը Հայաստանում հնագիտորեն փաստագրված ամենավաղ եկեղեցին է»,- նշեց Արսեն Բոբոխյանը:

Նա շեշտեց միջազգային համագործակցության կարևորությունը՝ նշելով, որ միջազգային ծրագրերի շնորհիվ հնարավոր է մեծ քանակությամբ բնագիտական հետազոտություններ իրականացնել: «Հիմնականում համագործակցում ենք եվրոպական և ամերիկյան մասնագետների հետ, իսկ վերջին շրջանում ակտիվացել է համագործակցությունը Ճապոնիայի և Չինաստանի հետ»,- ասաց Արսեն Բոբոխյանը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Քոթսենի անվան հնագիտության ինստիտուտի, Տոկայի համալսարանի, Լիոն-2 համալսարանի, Գերմանիայի հնագիտության ինստիտուտի, Հոնկոնգի համալսարանի, Մաքս Պլանկի գեոմարդաբանության ինստիտուտի, Իտալիայի միջերկրածովյան և Արևելյան հետազոտությունների ասոցիացիայի հետազոտողները ներկայացրին Մասիս բլուրի, Լեռնագոգ-1, Այրում, Դեբեդավան, Արգիշտիխինիլի, Բենիամին հնավայրերի, Ոսկեբլուր վաղբրոնզեդարյան բլուր-բնակատեղիի, Ազատան երկաթեդարյան բնակատեղիի, Եղեգիս-1 քարայր-կացարանի, Վերի բերդ ամրոցի, Հին Արտաշատ մայրաքաղաքի, Արուճ գյուղի միջնադարյան դղյակի, Վեդի ամրոցի, Շահումյանի վաղբրոնզեդարյան դամբարանի, Բագրատաշենի, Պտղավան-4, Բագրատաշեն-1 բացօթյա կայանների, Մագելանի քարանձավի, Գնիշիկաձորի, Տիգրանաշենի հնագիտական համալիրների, Գետահովիտ-2 քարայրի, Արգիշտիխինիլի քաղաքի դամբարանադաշտի և գյուղական բնակավայրի, Արտանիշ 9 բնակավայրի, Շամիրամի երկաթեդարյան քաղաքատեղիի և դամբարանադաշտի, Դվին քաղաքատեղիի, Տիկնունի հուշարձանի, Վերիշենի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու, Մեղրիի Սուրբ Հովհաննես (Անապատանաց), Լանջանիստի Սպիտակ վանքի, «Տանձի լեռ» վայրում գտնվող Սյունյաց թագավորների արքայական դղյակի պեղումների և հետազոտությունների արդյունքները:

«Այս ծրագրերը կշարունակվեն 2025 թվականին, որոշ հուշարձաններում իրականացվելու են նոր պեղումներ»,- նշեց Արսեն Բոբոխյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ երկրաբանական թանգարանում ցուցադրվում են ՉժՀ Ֆուջիան նահանգի ոչ նյութական մշակութային ժառանգության նմուշները

Ս/թ. ապրիլի 4-ին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանում բացվեց «Շոուշան քարի հմայքը» խորագրով ցուցահանդեսը: Այն ներկայացնում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ֆուջիան նահանգի ոչ նյութական մշակութային ժառանգությունը, դեկորատիվ-կիրառական արվեստի գանձերը: Ցուցահանդեսը նվիրված է Երկրաբանի միջազգային օրվան:

«Ներկայացված բոլոր ցուցանմուշները միավորում են չինական արվեստի յուրահատկությունները և ցուցադրում Ֆուջիան նահանգի տեղական կոլորիտը: Չինական արվեստը և արհեստներն առանձնանում են կատարման տեխնիկայի բազմազանությամբ ու նրբությամբ և իրենց ուրույն տեղն ունեն համաշխարհային արվեստում»,- ասաց թանգարանի վարիչ Գայանե Գրիգորյանը:

Նա նշեց, որ 2024 թվականին Երկրաբանական թանգարանում առկա բնության ժառանգությունը ցուցադրվել է Չինաստանի Ֆուջիանի թանգարանում: Ըստ այդմ որոշվել է այս տարի մեր թանգարանում ցուցադրել Ֆուջիանի թանգարանի ցուցանմուշները:

«Ցուցահանդեսում ներկայացված Շոուշան քարը Չինաստանի ամենահայտնի գունագեղ քարերից է, որի պաշարները Ֆուցզյան նահանգի Շոուշան բնակավայրում են: Այս քարից պատրաստել են և՛ կնիքներ, և՛ զարդեր, և մինչ օրս այն իր հմայքը չի կորցրել ժողովրդական արվեստում: Չինաստանում այն վաճառվում է որպես թանկարժեք քար և օգտագործվում է փորագրության համար: Բնակիչները հավատում են, որ քարը նաև բերում է հաջողություն և առողջություն»,- ասաց Գայանե Գրիգորյանը:

«Շոուշան քարի հմայքը» ցուցահանդեսը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանը, Հայ-չինական գործընկերության կենտրոնը և Ֆուջիանի թանգարանը:

Ցուցահանդեսը բաց կլինի երեք ամիս:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Ցեղասպանության թողած հետքը հայ ժողովրդի ինքնության ձևավորման վրա

Հայոց ցեղասպանության, հայ ժողովրդի հիշողության վրա ցեղասպանության թողած հետքի, ինքնության ձևավորման, ցեղասպանությունը վերապրածների, Ապրիլի 24-ի խորհրդի, պատմական ճշմարտության բացահայտման և արդարության վերականգնման մասին «Գեղարդ» հիմնադրամը զրուցել է պ.գ. դոկտոր, ցեղասպանագետ Հարություն Մարությանի հետ: Ընթերցողին ենք ներկայացնում այդ հարցազրույցից մի հատված՝

- Պարո՛ն Մարության, ի՞նչ ենք հիշում մենք, երբ ասում ենք Ցեղասպանության մասին հիշողություններ և ու՞մ ենք հիշում:

- Շատ տարողունակ հարց է. փորձեմ համակարգված պատասխանել: 2014 թվականի վերջերին և 2015 թվականին մեջտեղ եկավ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը, և ես՝ որպես հետազոտող, հույս ունեի, որ ժամանակի ընթացքում զարգացումներ կլինեն՝ կարգախոսի հետ կապված, մասնավորապես ավելի կիստակեցվեն ո՞ւմ եմ հիշում, ի՞նչ եմ հիշում, ինչպե՞ս եմ հիշում, ի՞նչ եմ պահանջում, ումի՞ց եմ պահանջում, ինչպե՞ս եմ պահանջում հարցերը: Բայց քանի որ պետական գաղափարախոսության մակարդակով, ցավոք սրտի, մեջտեղ եկավ միայն կարգախոսը, և զարգացումներ տեղի չունեցան, ես որոշեցի ինքս՝ որպես հետազոտող, այդ հարցին անդրադառնալ, և ո՞ւմ եմ հիշում հարցն ամենատարողունակն էր դրանց մեջ:

Մեր տոների և հիշատակի օրերի մեջ ապրիլի 24-ը գրված է որպես «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Այսինքն՝ առաջարկվում է հիշել զոհերին: Դա բնական է, որովհետև Հայոց ցեղասպանության տարիներին մենք ունեցանք մեկ ու կես միլիոն զոհ. դա անդառնալի կորուստ էր, որը խոր հետք թողեց հայ ժողովրդի հոգեբանության մեջ և մինչև հիմա տարբեր դրսևորումներով շարունակվում է: Իհարկե, պետք է հիշել զոհերին, հիշել, հարգել, պատվել, տարբեր միջոցառումներ անցկացնել. դա անհրաժեշտ նախապայման է՝ հիշատակի տոնի այդ մասով: Բայց կա նաև մեկ այլ նրբություն. բանն այն է, որ եթե մենք հիշում ենք միայն զոհերին, այսինքն՝ եթե մեզ առաջարկվում է հիշել միայն զոհերին, ապա դա կարծես թե բյուրեղացնում է զոհի կարծրատիպը: Այն, որ տասնամյակներ առաջ շատ ավելի ուժեղ էր, հիմա մի քիչ ավելի մեղմացել է, բայց էլի տարբեր ձևերով դրսևորվում է: Այսինքն՝ դա այդքան էլ լավ բան չէ:

- Այսինքն՝ նկատի ունեք՝ մենք մտնում ենք զոհի հոգեբանության մեջ, մնում ենք պարփակված ա՞յդ կարգավիճակում:

- Այո՛: Չնայած վերջին՝ Ղարաբաղյան շարժման և Արցախյան հաղթանակներից հետո այդ կարծրատիպն էապես թուլացավ, փոխվեց և նահանջեց, բայց հետո էլի տարբեր ձևերով մեջտեղ է գալիս, և ես՝ որպես պատմաբան, ընդամենը շեշտում եմ, որ ցեղասպանության տարիներին եղել են նաև այլ իրողություններ: Մասնավորապես մենք ունեցել ենք բազմաթիվ ինքնապաշտպանական մարտեր, և դա այն դրական տարրն է մեր հիշողության մեջ, որը նույնպես պետք է հիշվի և շեշտադրվի:

Եկեք ոչ միայն զոհերին հիշենք, այլև դիմադրողներին: Եվ անկախ նրանից, թե ինչպես են ավարտվել ինքնապաշտպանական մարտերը, դա կարևոր չէ, որովհետև կարևորն այն է՝ հայ մարդիկ, զենքը ձեռքին, բոլոր հնարավոր միջոցներով դիմադրել են թշնամուն: Մի դեպքում դա ավարտվել է հաղթանակով, մեկ այլ դեպքում՝ կորուստներով, բայց կարևորն այն է, որ դրանք անընդհատ պետք է շեշտադրենք:

- Բայց մենք կարծես թե դրանց մասին չենք էլ խոսում, կամ շատ քիչ՝ գուցե մասնագիտական դաշտում:

- Տասնյակ, հարյուրավոր գրքեր կան՝ խոսում են ֆիդայական շարժումների մասին, նույն ինքնապաշտպանական մարտերի մասին, բայց դա՝ որպես երևույթ, որպես ամբողջություն, որպես ինքնության մեջ ինչ-որ մի դրվագ ավելացնելու կամ փոխելու, նման մոտեցում չկա. խնդիրն այդ հարթության մեջ է: Այնպես չէ, որ չեն խոսում. խոսում են, գրում են և այլն, բայց դա չի ընդհանրացվում, և ինքնության մեջ այդ փոփոխությունը չի առաջարկվում:

Մենք ունեցել ենք նաև վերապրողներ: Այսօրվա Սփյուռքն առաջին հերթին վերապրողների ժառանգներն են: Եվ ոչ միայն Սփյուռքը. հաճախ միայն Սփյուռքն է շեշտվում, բայց չպետք է մոռանալ, որ Խորհրդային Հայաստանի և Հայաստանի այս Հանրապետության բնակչության 40-ից 60 տոկոսն արևմտահայերի ժառանգներն են: Այդպիսի հաշվարկ չկա. սա ուղղակի փորձագիտական բան եմ ասում, որ ես միշտ հետաքրքրվում եմ իմ գործընկերների միջոցով, թե որ գյուղում ինչ, ոնց, ովքեր են և այլն:

Այսինքն՝ դա միայն Սփյուռքը չէ. նաև արևմտահայության զգալի հատված եկավ Հայաստանի Հանրապետություն: Հետո Խորհրդային Հայաստան անընդհատ ներգաղթեր էին լինում: Այսինքն՝ Ցեղասպանության մասին խոսելիս մենք հիշենք ոչ միայն զոհերին, այլև՝ դիմադրողներին, որոնք, կրկնում եմ, ուժ և կորով են ունեցել, համառություն, հաղթանակի, ապրելու տենչ են ունեցել և կռվել են ցեղասպանություն իրականացնողների դեմ և վերապրողների, որը նույնպես հավասարազոր է հաղթանակի, որովհետև դու վերապրել ես, նոր կյանք ես ստեղծել, դու վերակենդանացրել ես քո նախնիներին և ինչ ձևով՝ նաև նրանց անունները քո զավակներին տալով: Տոհմերն ամբողջությամբ չեն ջնջվել պատմությունից, այլ յուրովի վերակենդանացել են:

- Նաև մարդիկ, որ տեղափոխվել են մի վայր, այդ վայրում Արևմտյան Հայաստանի վայրի անունն են դրել: Այդպիսի դեպքեր կան նույն Լիբանանում, Սիրիայում:

- Այո՛: Չմոռանանք, որ 1946-48 թվականների հայրենադարձության ժամանակ Հայաստանում, նաև 20-ական թվականներին, որ գալիս էին հայրենադարձները, ներգաղթողները, այստեղ՝ Երևանի շուրջը, ստեղծվեցին արբանյակ թաղամասեր՝ Նոր Մալաթիա, Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, բայց հիմա այդ «նոր»-ը դուրս է եկել, իսկ իրականում դրանք հենց «նոր»-ով են եղել: Եվ այդ հիշողությունը՝ տեղանունների մակարդակով, իրենց երեխաների անունների մակարդակով, ազգանունների մակարդակով, միշտ եղել է, կա և շարունակվելու է: Եվ սա նորմալ է:

- Պարո՛ն Մարության, Դուք նշեցիք այն դրական ազդակները, որոնք մեր հիշողության մեջ պետք է մնան, դրանք ևս ազդեցություն կարող են ունենալ մեր ինքնության վրա, բայց, այնուամենայնիվ, դրանք մենք շատ նեղ ենթատեքստում ենք հիշում, բայց ցեղասպանությունը՝ որպես չարիք, մեր ինքնության վրա ինչպիսի՞ ազդեցություն թողեց:

- Շատ մեծ ազդեցություն... Եվ շատ տարբեր դրսևորումներ ունեցավ: Մենք ոչ թե հիշում ենք թյուրքատյացության հենքով, այլ հիշում ենք պատմական արդարության և պատմական ճշմարտության հենքով: Այսինքն՝ պատմական ճշմարտության բացահայտում և պատմական արդարության վերականգնում: Ճշմարտություն և արդարություն. դրանք մեզ մոտ ստանում են պատմական «նախդիրով»: Դա մտածողության հետ է կապված և այդ իմաստով շատ արդարացի է: Մենք պահանջում ենք արդարություն: Մենք պահանջում ենք ճշմարտություն՝ ընդդեմ այդ ժխտողականության, որ անընդհատ՝ հարյուր տարի, շարունակվում է, և մեր հարևան երկրի քաղաքացիները ներծծված են այդ ժխտողականության թույնով: Ու դա իր հետ բերում է հայատյացության տարբեր դրսևորումների:

Ինչպես տեսանք, 30-40 տարվա մեջ այդ հայատյացությունը ներդրվեց նաև Ադրբեջանի քաղաքացիների մեջ իրենց պետության ղեկավարների կողմից, և դա դարձավ պետական գաղափարախոսության նման մի բան: Իսկ մեր պարագայում դա պատմական ճշմարտության վերհանումն է և պատմական արդարության վերականգնումը: Դրանք որակապես տարբեր բաներ են:

- Պարո՛ն Մարության, երբ որ մենք խոսում ենք հիշողության, այսինքն՝ իր դրսևորումների մասին, իր թողած հետքերի մասին, բայց այսօր արդեն ցեղասպանության մասին հիշողությունը կարծես ինքն իրենով միավորում է Սփյուռքում ապրող հայերին, մեզ: Այսինքն՝ կա մի երևույթ, որի շուրջ գրեթե հավաքվում ենք:

- Այո՛: Տարբեր պետություններում, տարբեր ժողովուրդների մոտ տարբեր է. մի դեպքում դա հաղթանակի հիշողությունն է, ասենք Մայիսի 9-ի հիշողությունը, մի դեպքում Ֆրանսիական հեղափոխության օրը՝ հուլիսի 14-ը, դա այլ հիշողություն է, մեր պարագայում դա Ապրիլի 24-ն է, հրեաների պարագայում դա Յոմ Հաշոան է՝ Հոլոքոստի զոհերի և հիշողության օրը: Դա նույնպես նորմալ է: Այսինքն՝ տարբեր իրադարձություններ են մարդկանց միավորում: Մեր պարագայում միավորում է Ապրիլի 24-ը: Եվ այդ պարագայում շատ կարևոր է, թե Ապրիլի 24-ը ինչպես ես հիշում և ինչպես ես նշում:

- Եթե մի օր ինչ-որ հրաշքով Թուրքիան ճանաչի Ցեղասպանությունը, այդ պատմական արդարությունն ի վերջո տեղի ունենա, արդյոք այդ միասնությունը չի՞ փշրվի:

- Չեմ կարծում, որ կփշրվի: Հակառակը՝ ավելի կուժեղանա, որովհետև պետք է որոշեն, թե ինչ ճանապարհներով են հետո շարունակելու աշխատանքը: Հիմա նույնպես կան տարբեր մոտեցումներ. չկա համահայկական մոտեցում, իհարկե կա 2015 թվականի հունվարյան հռչակագիրը, բայց դա մոտեցումներից մեկն է... Ժամանակին խնդիր էր դրվում պատրաստել մեկ թղթածրար, այ, այդ խնդիրը չիրագործվեց: Մեկ թղթածրար, թե ինչ քայլերով առաջ գնալ, ինչպես առաջ գնալ: Այդ հարցադրումը եղավ, սակայն քայլեր չձեռնարկվեցին իրավական ուժեղ փաստաթուղթ ստեղծելու ուղղությամբ:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ (20.03.2025)

COST ծրագրի տեղեկատվական օրը ՀՀ ԳԱԱ-ում

Ս/թ. ապրիլի 15-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության (COST) ծրագրի տեղեկատվական օրը: COST ծրագիրը ֆինանսավորում է հետազոտական ցանցեր, որոնք կոչվում են COST գործողություններ: Դրանք միավորում են գիտնականներին և նորարարներին տարբեր ոլորտներից՝ 4 տարվա ընթացքում նախանշված թեմայի շուրջ համագործակցելու նպատակով:

COST ծրագրի տեղեկատվական օրվա միջոցառումը կազմակերպել էին «Նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը, COST ասոցիացիան և ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչությունը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության, COST ասոցիացիայի անդամներ, COST ծրագրի շահառուներ, ՀՀ գիտակրթական կառույցների ներկայացուցիչներ: COST ազգային համակարգող Տիգրան Արզումանյանը նշեց, որ տեղեկատվական օրվա նպատակն է ներկայացնել COST ծրագրի հիմնական դրույթները, ծրագրին մասնակցության ընթացակարգը, ֆինանսավորման հնարավորությունները:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը: «Ես ուզում եմ ընդգծել կապերի հաստատման և

գործընկերության նոր հնարավորությունների կարևորությունը, որոնք հասանելի դարձան Հայաստանի հետազոտողներին 2022 թվականին COST ասոցիացիային անդամակցելու արդյունքում: ՀՀ ԳԱԱ-ն մշտապես կարևորում է միջազգային համագործակցությունը: ԳԱԱ-ն մի շարք միջազգային կազմակերպությունների և ցանցերի անդամ է, ունի համագործակցության բազմաթիվ պայմանագրեր: ԳԱԱ ինստիտուտներն իրականացնում են ավելի քան 60 միջազգային դրամաշնորհային ծրագրեր: Ցավոք, COST-ի դեպքում այս հնարավորությունը լիարժեք չի օգտագործվել: Ես տեղեկացվել եմ, որ Հայաստանը COST գործողություններում ներկայացված է ընդամենը 30 %-ով: COST գործողություններում ակտիվ և ընդգրկուն մասնակցությունը հրաշալի հնարավորություն կլիներ եվրոպական և միջազգային գլխավոր խաղացողների հետ կապերի և համագործակցության հաստատման համար՝ որպես արդյունք ունենալով համատեղ հետազոտություններ և միջազգային գիտական համագործակցություն: Ես վստահ եմ, որ գիտության և նորարարության ոլորտում վերջին զարգացումները, հետազոտությունների ֆինանսավորման զգալի աճը, նոր ծրագրերի իրականացումը նպաստում են գիտության միջազգայնացմանը, նոր արդյունքների ստացմանը և հայաստանյան թիմերի՝ եվրոպական ծրագրերում մասնակցությանը: Վստահ եմ, որ այսօրվա միջոցառումը կնպաստի ծրագրի մասին տեղեկացվածության բարձրացմանը և մեր հետազոտական համայնքի ավելի ակտիվ մասնակցությանը COST գործողություններում»,- ասաց Արամ Պապոյանը:

COST ծրագիրը ներկայացրին COST ասոցիացիայի փոխնախագահ, պրոֆեսոր Զորան Պոպովսկին և COST քաղաքականության բաժնի ղեկավար Բարթ Վեյսը: Ելույթներ ունեցան COST գործողությունների հայաստանյան մասնակիցները՝ ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալլա Ալեքսանյանը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ավագ գիտաշխատող Անի Պալոյանը և Գենետիկական փորձագիտական կենտրոնի մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայի ղեկավար Աննա Հովհաննիսյանը:

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ COST ասոցիացիայի փոխնախագահ, պրոֆեսոր Զորան Պոպովսկու, ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնակատար Արամ Պապոյանի և ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանի աշխատանքային հանդիպումը, որի շրջանակում քննարկվեցին միջազգային և միջգիտակարգային համագործակցության հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Խմբագրության կողմից

Ավելի քան մեկ դար մեզ ուղեկցում են 1915 թ. Հայոց ցեղասպանության վիշտը և մեր պատմական հայրենիքի կորստի ցավը: Դրանք անթեղված են մեր հավաքական պատմական հիշողության մեջ, որոնք անհնար է ջնջել, վերախմբագրել կամ մոռացության մատնել: Մեր պատմությանը, ազգային արժեքներին, իրավացի պահանջներին մշտապես տեր կանգնելը ոչ միայն բոլորիս պարտքն է, այլև անօտարելի իրավունքը:
Հայաստանի երեք հանրապետությունների զինանշաններին պատկերված է Արարատ լեռը: Հայոց դարավոր պատմության ընթացքում այն դարձել է մեր ինքնության, մեր հավաքական միասնության խորհրդանիշը: Սոսկ քարտեզով մեզնից բաժան, բայց հայոց կյանքից անվերջ անբաժան սրբազան Արարատն իր խորին խորհրդով մշտապես ուղեկցում է մեզ և տա աստված, որ մեր պատմության քարե այդ լուռ վկան մի օր խոսի...

Աչք ենք բացել ու դու մեր դեմ եղել ես, կա, Արարա՛տ,
Բայց ամեն օր մեզնից հեռու ու մեզ անհա՛ս, Արարա՛տ,
Աշխարհի մեջ ամեն հայի, ամեն ծայրից երևում,
Բայց մնում ես հեռո՛ւ-հեռվում, մնում երազ, Արարա՛տ:

Սիլվա Կապուտիկյան

Արարատի ծեր կատարին
Դար է եկել վայրկյանի պես
Ու անցել:
Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել:
Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել...

Ավետիք Իսահակյան

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:
Մենք մեզ ոչ-ոքից չենք գերադասում,
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մենք, միայն մենք Արարատ ունենք...

Պարույր Սևակ

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

Հովհաննես Շիրազ

Մեր հոգեկան սնունդը Արարատից է գալիս... Եվ իզուր չէ, որ հայ ժողովուրդը պատմության մեջ չտեսնված չարչարանք է կրել, միլիոնավոր զոհեր է տվել, ծով արյուն է թափել՝ այդ լեռը չկորցնելու համար:

Կոստան ԶԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ

Ես թափառում եմ Արաքսի ձախ ափին, իսկ քիչ այն կողմ՝ անասելիորեն մոտիկ հեռվում, Արարատն է՝ հայոց պատմության մեծագույն որբը: Օրը լցված է կիզիչ արևով, ես կարող եմ հաշվել մեծ լեռան բոլոր կնճիռները, իսկ Արարատն ասում է ինձ. «Դուք տեսնում եք ինձ, ես էլ ձեզ եմ նայում, նայում եմ գիշեր-ցերեկ»:

Իմ թիկունքում խաղողի այգիներ են, հին ու նոր ծառաստաններ, և ինձ թվում է՝ Արարատը կարոտում է մեր կողմի խաղողն ու մրգերը:

Արարատը երևի աշխարհի ամենաբարձր սարն է, հազար անգամ ավելի բարձր, քան էվերեստը, որովհետև հայ մարդուն նա երևում է աշխարհի բոլոր կողմերից: Արարատը մեր պատմության մեծագույն վկան է և մեծագույն համրը. ե՞րբ պիտի նա խոսի:

Հիմա ինձ թվում է, թե Արարատի կնճիռների մեջ ժպիտ կա, նա կարծես կարդում է իմ տխրությունը և ուզում է փափուկ շոյել իմ սպիտակող մազերը, ինչպես պապը՝ թոռանը: «Ես էլ եմ սպիտակել, Արարա՛տ»: Ես չեմ կարող անցնել գետը, Արարատը ամեն տեղից մոտիկ է, և մենք լռում ենք երկար:

Իսկ թիթեռները, մեղուները անարգել խախտում են սահմանը...

Վարդգես ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ
հայազգից,
Դիմել դէպ իւրեանց սիրուն հայրենիք:

Ռաֆֆի

ԱՐԱՐԱՏԸ

Արարատը մշտապես առկա է հայոց լեզվում, հայի հիշողության, հայ քերթության մեջ, հայ կյանքում: Բայց և այսօրվա հայկական պետության սահմանների մեջ չէ. գտնվում է գերության մեջ:

Հայը, բացելով իր դուռը, դիմացը տեսնում է Արարատը: Տեսնում է և իսկույն մի նզովք է շպրտում դեպի այնտեղ, որտեղ պետք է շպրտել. նզովք նրանց, ովքեր գերության մեջ են պահում այն. նրանց, ովքեր նպաստեցին դրան. նրանց, ովքեր անտարբեր և անհոգ գտնվեցին. մի խոսքով՝ շատ-շատերին: Պատմությունը երկար է: Այսպես է նա սկսում իր օրը՝ նզովելով պատասխանատուներին և ողջունելով լեռը: Այս գայթակղությունը մեծ է: Որովհետև տեսարանը ևս եզակի է: Ընդհանրապես, բոլորս մեր լեռների մասին ասում ենք՝ «ամենագեղեցիկը աշխարհում»: Ամեն մեկն իր լեռան մասին: Սակայն այստեղ այցելող օտարազգին ևս պարտավորվում է խոստովանել, որ Արարատը իրոք աշխարհի ամենագեղեցիկ լեռն է: Դա ինչ-որ անմոռանալի բան է:

Ամեն առավոտ հայն այս ամենը տեսնում է...

Միցոս ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում համահեղինակել է առնվազն մեկ հրապարակում կամ մեկ մենագրություն.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն մեկում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) լուսանկար,
գ) ինքնակենսագրություն,
դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ,
թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի կրտսեր գիտաշխատողի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում.

2) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով առաջին ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) ստացել է առավելագույնը 20 տարի առաջ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) լուսանկար,
գ) ինքնակենսագրություն,
դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը (դրա առկայության դեպքում),
զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ (առկայության դեպքում),
թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 28.04.2025 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: